

# ՈՐՍՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՊԱՀՆԵՐԻ ԴԵՐԸ ԽՈՉԵՐԻ ԱՖՐԻԿԱԿԱՆ ԺԱՆՏԱԽՏԻ (ԽԱԺ) ԴԵՊՔՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



"ՏԱՊ-Ա1" ծրագիր  
ԽԱԺ-ի հանրային  
իրազեկման պոստեր

## Օգտակար խորհուրդներ

Շատ մեծ է որսորդների և  
անտառապահների դերը վայրի  
խոզերի շփման միջոցով ԽԱԺ-ի  
տարածումը կանխարգելելու  
գործում:

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԿ ԽԱԺ-Ի ՄԱՍԻՆ

*Առաջացնում է ծանր կորուստներ և մեծ  
տնտեսական վնաս է պատճառում  
ֆերմերներին և գյուղացիական  
տնտեսություններին;*

*Գրեթե բոլոր վարկված խոզերը անկում են  
շատ արագ;*

*Դժվարացնում է խոզի մսի արտադրությունն  
ու իրացումը և կարող է հանդիսանալ  
համաշխարհային պարենային  
անվտանգության սպառնալիք:*

## Որո՞նք են ռիսկի հիմնական գործոնները

- Ընտանի խոզերի ազատ պահվածքը և վայրի խոզերի հետ շփման հնարավորությունը:
- Տղերը /Ornithodoros տեսակի/

- ✓ **Տեղեկացնե՛լ** անասնաբույժին ԽԱԺ-ի կասկածի կամ վայրի խոզի անկման դեպքում,
- ✓ **Մի թաքցրեք** հիվանդ կամ սատկած վայրի խոզերը անասնաբուժական ծառայություններից,
- ✓ **Աջակցե՛ք** անասնաբուժական ծառայություններին հիվանդ կամ սատկած վայրի խոզերին ժամանակին հայտնաբերման գործում,
- ✓ **Հետևե՛ք** անասնաբուժական ծառայությունների խորհուրդներին և հրահանգներին հիվանդության տարածումը կանխելու նպատակով,

## Որո՞նք են վարակի աղբյուրները

- Հիվանդ, վիրուսակիր, սատկած խոզերը և դրանց արտազատուկները`
  - ❖ քթի հոսքից, կղանքից, մեզից,
  - ❖ ակնային հատվածից,
  - ❖ արյունը և բնական անցքերից արյունահոսությունը:
- ԽԱԺ-ի վիրուսով ախտահարված առարկաները, կերն ու ջուրը:

## Որո՞նք են ԽԱԺ-ի վարակի տարածմանը նպաստող հիմնական գործոնները

- Արյան մեջ վիրուսի բարձր չափաքանակը,
- Վիրուսի բարձր դիմացկունությունը արտաքին միջավայրի պայմաններում.
  - ❖ հողում մինչև 180 օր, մսեղիքում 5- 6 ամիս, կղանքում մինչև 160 օր, մեզում 60 օր, դիակում 17 օրից մինչև 10 շաբաթ:

## Ինչպե՞ս է փոխանցվում վարակը

- Շփման միջոցով /հիվանդ կենդանիներ/,
- Կենսաբանական փոխանցմամբ /վարակված տղեր/,
- Մեխանիկական շփմամբ:



**Տեղեկատվության և համագործակցության  
համար գործող ջուրջօրյա  
թեժ գիծ՝ (010) 20 60 40**